Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
հունվարի 14 -ի N 19- Ա
որոշման

«ԱՐՏԱԿԱՐԳ ԱՐՁԱԳԱՆՔ ՔՈՎԻԴ-19-ԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արձագանք Քովիդ-19-ի հետևանքներին. Բարձրացնել ազգաբնակչության զգոնությունն ու իրազեկվածության մակարդակը՝ նպաստելով Քովիդ-19 կանխարգելմանը Հայաստանի Հանրապետությունում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիա ք. Ժնև, Շեմին դը Կրեց 17: հեռ. + 41 22 730 42 22
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևան և ՀՀ մարզեր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	9,311,456 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	100,000 քաղաքացիներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	23. 01. 2020 թ. – 30.04. 2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Քովիդ-19-ի կանխարգելման վերաբերյալ հանրային բնակչության իրազկեվածության և զգոնության բարձրացում՝ լայնամասշտաբ հանրային քարոզարշավների միջոցով: Ժամանակահատված՝ 23 հունվարի 2021թ. - 30 ապրիլի 2021թ. Բյուջե՝ 8,296,659 դրամ 2. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 1,014,797 դրամ, ինչը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձեր՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Ձայնային ուղերձների ձայնագրման ծառայություններ՝ 190,956 դրամ արժողությամբ 2. Ուղերձների տարածման համար սոցիալական ցանցերում գովազդային ծառայությունների ձեռքբերում՝ 1,952,121 դրամ արժողությամբ 3. Թռուցիկների և տեղեկատվական նյութերի տպագրության ծառայությունների ձեռքբերում՝ 3,655,453 դրամ 4. ՀԿԽԸ կողմից իրականացված Քովիդ-19-ի մասին ազգաբնակչության իրազեկվածության վերաբերյալ հետազոտության արդյունքների հիման վրա հանրությանն ուղղված ուղերձների մշակման ծառայությունների ձեռքերում՝ 818,385 դրամ 5. Օնլայն սոցիալական ինտերակտիվ պլատֆորմի մշակման և գործարկման ծառայությունների ձեռքբերում՝ 736,965 դրամ արժողությամբ 6. Թեժ գծի ծառայության գործարկման համար կարճ համարով հեռախոսակապի տեղադրման ծառայությունների ձեռքբերում՝ 942,779 դրամն
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 1,014,797 դրամ, ինչը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձեր՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ավարտական հաշվետվություն Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուի կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Ինչպես նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեn տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ